ՏԱՐՈՆԻ ԵՎ ՍԱՍՈՒՆԻ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐ-ԹՈՌՆԻԿՅԱՆՆԵՐԸ (XI—XII դդ.)

Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

X դարի երկրորդ կեսին Տարոնը մաս առ մաս կցվեց Բյուզանդիային[1], *վերածվելով ռազմա-վարչական միավորի, որը, Հայաստանում զավթած այլ շրջանների հետ, կայսրությունը ծառայեցրեց իր հետագա նվաճողական ծրագրերի իրականացմանը*[2]: *Պատահական չէր, որ մի առ ժամանակ անց, բացի այլ տերիտորիաներից, կայսրությունը տիրացավ նաև Վասպուրականին*[3]: *Իսկ մինչ այդ՝ 1000 թ. Վասիլ II-ը (976—1025) գործնական քայլի դիմեց Նփրկերտի ամիրայությունը ևս կայսրության քաղաքական ոլորտը ներգրավելու ուղղությամբ, ինչպես երևում է Ասողիկի մի հաղորդումից. «Ամիրայն Նփրրկերտոյ քուերորդի Բատին եկն առ նա (Վասիլ II—Է. Դ.) ի քաղաքն Երիդայ (Արշամունիքի—Է. Դ.) և արքունատուր ընծայիւք պատուեալ զնա՝ տալ նմա զմաժիստռոսութեան պատիւն: Եւ հրամայէ զօրացն Զորրորդ Հայոց և Տարոնոյ՝ զնական լինել նմա յոր պէտս և կոչեսցէ»*[4]: *Կարծում ենք, որ X դարի վերջին և XI դարի առաջին տասնամյակներին, վերը նշված շրջաններից առնվազն Տարոնի բյուզանդական զորահրամանատարը Գանձին էր, որի մասին Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Յայսմ ժամանակի (XI դարի 30-ական թթ. կեսերին— Է. Դ.) զորաժողով արար իշխանն Հայոց Դանձի և գնացեալ էառ զքաղաքն Բերկրի յարևելս՝ ի Պարսից և կոտորեաց առ հասարակ զամենայն քաղաքն և ի սուր սուսերի մաշեաց զօրսն Տաճկաց... Եւ այսպիսի պատերազմաւ անհոգացեալ կային զօրքն Հայոց և էին ի մեծ գինարբութեան. և խտրիկն, որ Լ. ամիրայ քաղաքին Բերկրոյ, և սորա տեսեալ զանպատրաստութիւն զօրացն Հայոց, զրեաց ի քաղաքակիցսն իւր զալ ի յօգնութիւն իւր... և սպանաւ յաւուրն յայնմիկ մեծ իշխանն Հայոց Դանձի, և մնաց Տաճատ ի տան հայրենեաց իւրոց որդի նորա և Դանձի և ամենայն զօրքն իւր անկան ի քաղաքին Բերկրի»*[5].

---

1 «Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», Պետերբուրգ, 1885, էջ 183: Տե՛ս մեր՝ «Տարոնը հայ-բյուզանդական հարաբերություններում (IX դարի երկրորդ կես—X դար)», «Պատմա-բանասիրական հանդես», 1978, № 1, էջ 125—140:

2 Հմմտ. P. Charanis, The Armenians in the Byzantine Empire, Lisbon, 1963 էջ 49: K. N. Yuzbashian, L'Administration Byzantine en Arménie aux Xe — XIe siecles, „Revue des Études Arméniennes", Nouvelle Série, t. X, Paris, 1973—1974, էջ 113 և 116:

3 Հմմտ. Հ. Բարթիկյան. Գրիգոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման հարցի շուրջը (տե՛ս «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության», Երևան, 1971), էջ 64:

4 Ասողիկ, էջ 276:

5 Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 74—75: Որոշ հետազոտողներ Դանձին համարում են Բերկրիի կառավարիչ (տե՛ս E. Honigmann, Die Ostgrenze des Byzantinischen Reiches, Bruxelles, 1935, էջ 172: Ա. Ալպոյաճյան, Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրե, 1950, էջ 243: Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 201.

Հայտնի է, որ բյուզանդացիները ստիպված են եղել Բերկրին գրավել մի քանի անգամ՝ Ռոմանոս III Արգիրոս (1028—1034) և Միքայել Պափլագոնացի (1034—1041) կայսրերի ժամանակ[6]։ Քանի որ Խլաթը և Բաղեշը գտնվում էին Մրվանյանների ձեռքում[7], կայսրության համար ավելի հարմար էր Վասպուրականի հետ կապ պահպանել Վանա լճի հյուսիսային և հյուսիս-արևելյան առափնյա շրջանների վրայով։ Այդ շրջանների գրավումը ավելի դյուրին էր, քանի որ Հարքը և Ապահունիքը[8] Դավիթ Կյուրապաղատի մահից հետո անցել էին կայսրությանը։ 1023—1026 թթ. Նիկեփոր Կոմմենոսը գրավեց Արճեշը[10], որից հետո կայսրությունը մտահոգվեց խիստ կարևոր ռազմաստրատեգիական նշանակություն ունեցող Բերկրիի գրավման գործով։ Բյուզանդական զորքերի արշավանքներն այդ ուղղությամբ գլխավորել են Նիկողայոս (Քրիսելիոս) Բուլղարը, Կոստանդին Կավասիլասը, Նիկետաս Պեգոնիտեսը[11]։ Լաստիվերտցու շարադրանքից երևում է, որ այդ արշավանքներից մեկի ժամանակ, որը տեղի ունեցավ Միքայել IV-ի օրոք, Վասպուրականի թեմի կառավարիչ Կավասիլասից հետո Բերկրի է գալիս մի այլ անձնավորություն[12]։ Այնուհետև, վերցնելով գորքի մի մասը, նա հեռանում է Արծակ («վասն առատութեան դարմանին և այլ պիտոյից հնձելոց»)[13], որտեղից, ինչպես երևում է պատմիչի հաղորդումից, օգնության չի հասնում Բերկրին պաշարող բյուզանդական զորքի մնացած մասին, երբ վերջինիս վրա, քաղաքի բերդում փակված Խտրիկի սադրանքով, հանկարծակի հարձակվում են թշնամիները և կոտորում[14]։

Կ. Յուզբաշյանը Արծակը նույնացնում է Արծկեի հետ[15]։ Անհրաժեշտ է

K. Yuzbashian, նշվ. աշխ., էջ 150)։ Սակայն Ուռհայեցու հաղորդումից պարզ երևում է, որ Դանիին արևմտյան մի շրջանից էր զորաժողով արել և գնացել արևելք՝ դեպի Բերկրի։

6 N. Adontz, Samuel l'Arménie roi des Bulgares. „Etudes Arméno-Byzantines" (այսուհետև՝ EAB), Lisbonne, 1965, էջ 397, տե՛ս նաև՝ Հ. Բարթիկյան, նշվ. աշխ., էջ 69—70։

7 Տե՛ս E. Honigmann, նշվ. աշխ., քարտեզ IV։

8 Ինչպես Հիշտ նշում են հետազոտողները, Վասիլ II-ի կողմից Վարդ Սկլերոսի ապստամբության ժամանակ Դավիթ կյուրապաղատին առաջարկած հողերից (որոնք թվարկում է Ասողիկը) կայսրությանը չէին պատկանում Ապահունիքը և Հարքը, որոնք Դավիթը գրավեց միայն X դարի վերջին (տե՛ս N. Adontz, Tornik le Moine, EAB, էջ 304։ Ր. Բարթիկյան, О феме Иверия, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, № 12, էջ 71—72), սակայն իր այլ կալվածքների շարքում ստիպված եղավ կտակելու կայսրությանը։

9 Տե՛ս նաև մեր՝ «Մանագկերտը արաբա-բյուզանդական հակամարտության ոլորտում (IX դարի երկրորդ կես—X դար)», «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, էջ 153—167։

10 E. Honigmann, նշվ. աշխ., էջ 171։

11 Տե՛ս նույն տեղում, էջ 172։ R. Grousset, Histoire de l'Arménie des origines a 1071, Payot, Paris, 1947, էջ 563—564 և այլ)։

12 Նա պետք է նշանակված լիներ բերդը պաշարող բյուզանդական զորքի գլխավոր հրամանատար։

13 «Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցւոյ», աշխ. Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 45։

14 Նույն տեղում։ Կ. Յուզբաշյանը գտնում էր, որ Ուռհայեցու հիշատակած, այդտեղ զոհված Դանիին կարելի է նույնացնել Նիկողայոս Քրիսելիոս Բուլղարի հետ (տե՛ս «Повествование вардапета Аристакэса Ластивертци»; перевод с древнеармянского, вступительная статья, комментарии и приложения К. Н. Юзбашяна, М., 1968, էջ 153)։ Սակայն հետագայում վերանայելով իր այդ կարծիքը նշում է, որ դրանց չպետք է նույնացնել (K. Yuzbashian, նշվ. աշխ., էջ 150)։

15 «Повествование вардапета Аристакэса Ластивертци», էջ 153, 166, 186։

նշել, որ Արիստակես Լաստիվերտցին տուանձին հիշատակում է թե՛ Արծակը[16] և թե՛ Արծկեն, վերջինիս մասին նշելով՝ «որ է ի մէջ ծովուն Բզնունեաց»[17]։ Արծակը հիշատակում է նաև Ղաղար Փարպեցին Բագրևանդում, Բերդկունս գյուղի մոտ, այն նույնպես տարբերելով Արծկեից, որը «ի գաւառէն Բզնունեաց»[18]. Ղ. Ալիշանը կարծում է, որ Ալաշկերտի (Վաղարշակերտ) գավառում գտնվող ներկայիս Խարապա-գալե (Բերդ ավեր) լեռան անունը կապ ունի Բերդկունս հին գյուղի անվան հետ[19]։ Մեծանուն հայագետը, հիմնվելով Ղևոնդի մի հաղորդման վրա[20], նշում է. «Նոյն թուի սա (Արծակ— Է. Դ.) և ընդ Արձնի գեղջ»[21]։ Ըստ երևույթին Արծակը և Արձնին իրոք իրարից հեռու չէին՝ երկուսն էլ գտնվելով Ղևոնդի հիշատակած արքունի պողոտայի Բագրևանդով անցնող հատվածի վրա[22]։ Առաջինը, ըստ Ղ. Ալիշանի վերոհիշյալ ենթադրության, կարող էր համապատասխանել ներկայիս Խարապա-գալե լեռան հարավ-արևմտյան լանջին գտնվող ավերակներից մեկին։ Իսկ երկրորդը կարող էր գտնվել ներկայիս Խաչլու գյուղի շրջակայքում, քանի որ Արձնի անունը, ըստ երևույթին, պահպանվել է այդտեղ գտնվող «Արզնուոյ» մարգագետին անվան մեջ, որը հիշատակում է Ս. Հայկունին[23]։ Հետագա ուսումնասիրողները ևս Արծակը և Արծկեն չեն նույնացնում[24]։

Ղ. Ինճիճյանը դեռևս ժամանակին նման ենթադրություն էր արել, թվում է թե հենվելով Լաստիվերտցու ինչ-որ մի ձեռագրի վրա, սակայն հնարավոր է, որ ինքն է բացատրելու համար այդտեղ Բերկրի տեղանունը ավելացրել (կամ գուցե մինչ այդ ավելացվել էր. «Երթեալ դադարեաց հեռագոյն ի Բերկրոյ՝ ի տեղւոջ ուրեք, որ կոչի Արծակ», տե՛ս Ղ. Ինճիճեան, Նստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 123)։ Եթե նույնիսկ Ղ. Ինճիճյանն այդպիսի ձեռագրի է հանդիպել, ապա այդ տարբերակից նույնպես ուղղակի հետևում է, որ Կավասիլասից հետո եկածը, վերցնելով զորքի մի մասը, գնաց և իջևանեց Բերերդից հեռու գտնվող մի վայրում, որպիսին էր նշվող Արծակը. Ինչպես տեսնում ենք, Ղ. Ինճիճյանը վրիպում է իր այդ ենթադրության մեջ։ Իսկ Գ. Մանուկյանը թյուրիմացաբար գրում է, որ Լաստիվերտցու պատմության Ղ. Ինճիճյանի օգտագործած ձեռագրում Արծակը Բերկրիում ինչ-որ տեղ է համարված (Գ. Մանուկյան, Արիստակես Լաստիվերտցի, Երևան, 1977, էջ 196)։ Գ. Մանուկյանը, միանալով Ա. Տեր-Ղևոնդյանի հայտնած կարծիքին (Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 201), նշում է, որ «Արծակ կոչվածը իսկապես Արձակն է»։ Սակայն հարկ չկա պատմիչի հաղորդումը աղավաղելու, քանի որ Արծակի տեղը քաջ հայտնի է։ Գ. Մանուկյանը սխալվում է նաև նշելով, որ խտրիկը Արծակում պարտվեց (նշվ. աշխ., էջ 96)։ Ինչպես հաղորդումից երևում է, խտրիկը գործեց Բերկրիի միջնաբերդից, իսկ Արծակ հեռացած բյուզանդական զորավարը օգնության չհասավ Բերկրիի պատերի տակ կոտորվածներին։

16 Արիստակես Լաստիվերտցի, էջ 48։

17 Նույն տեղում, էջ 94։

18 «Ղաղարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան», աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեանի և Ստ. Մալխասեանի, Տփղիս, 1904, էջ 23. 61։

19 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 535։

20 «...պողոտայն արքունի ընդ գաւառն Ապահունիս։ Հասանէին ի գաւառն Բագրևանդ ի դիւղ Արձնի» («Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 148)։

21 Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 535։

22 Այդ ճանապարհը անցնում է այն լեռնաշղթայով, որը այժմ անվանվում է Շահիլոլ (բառացի՝ շահի ճանապարհ, այսինքն՝ արքունի պողոտա)։

23 Ս. Հայկունի, Բագրեւանդ ջրաբաշխ գաւառ, մասն Ա, էջմիածին, 1894, էջ 123։

24 Հ. Ս. Էփրիկյան, Բնաշխարհիկ բառարան, հատ. Ա, Վենետիկ—Ս.-Ղազար, 1903—1905, էջ 302—304։ Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 39։ О. О. Карагезян. Локализация урартского царского города Арзашку, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1976, № 5, էջ 67։

Զորքի մյուս մասը, որ Արծակ հեռացածներից հետո մնացել էր միջնաբերդի պարիսպների տակ, ինչպես վերն ասվեց, կոտորվում է պաշարվածներին օգնության հասած այլազգիների կողմից։ Քանի որ Ուռհայեցին և Լաստիվերտցին նշում են, որ այլազգիներին կանչում է միջնաբերդում գտնվող խրտրիկը, ուրեմն նրանք միևնույն դեպքի մասին են խոսում, որի ժամանակ էր գործում Ուռհայեցու հիշատակած Գանձին։ Հետևաբար Գանձիին պետք է փընտրել միջնաբերդի պատերի տակ կոտորվածների մեջ։ Գանձին, լինելով բյուզանդական ծառայության մեջ գտնվող հայ իշխաններից[25], թերևս, իր իշխանության տակ գտնվող տերիտորիայից զորաժողով էր արել և եկել արևելը, անցնելով Բերկրիի վրա գրոհող բյուզանդական զորքի զորավարի ընդհանուր հրամանատարության տակ։ Այնտեղ էլ բյուզանդական զորքի մի մասի հետ (մյուս մասը, ինչպես նշվեց, բյուզանդական գլխավոր հրամանատարի հետ հեռացել էր Արծակ) կոտորվում է նաև «իշխան Հայոց» Դանձիի գլխավորած հայկական զորաջոկատը իր հետ միասին։

Գանձիին պետք է ժամանակակից լիներ Ուռհայեցու հիշատակած Մուշեղը[26], որը Սասունի իշխան Թոռնիկի հայրն էր[27]։ Ինչպես նշել են հետազոտողները, Թոռնիկը Գրիգոր Մագիստրոսի նամակների հասցեատերն էր, որին Մագիստրոսը Մամիկոնյան իշխան է անվանում[28]։ Ուռհայեցին հիշատակում է նրան որպես Գրիգոր Մագիստրոսի որդու՝ Գրիգոր Վկայասերի փեսա[29]։

3. Մարկվարտը հարցականի տակ նշում է, որ Մուշեղը Հովհաննես-Թոռնիկի (որը Տայքի Մամիկոնյաններ-Թոռնիկյաններից էր) եղբորորդի, 990 թ. սպանված Զորդվանել մագիստրոսի որդին էր[30]։ Ն. Ակինյանին հավանական է

---

25 Տե՛ս մեր՝ «Թոռնիկյանների քաղաքական դերը X դ. հայ-բյուզանդական հարաբերություններում», ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1977, № 10, էջ 72։

26 Հիջրի 423 թ. (1035—1036), երբ Վանի և Ոստանի վրայով անցնող մահմեդական «ուխտավորների» դեմ ընդվզեցին տեղի հայերը, նրանց օգնության հասած սասունցիներին, որոնք Խլաթի տիրոջ (Մրվանյան ամիրայի) հետ խաղաղության ուխտ ունեին (Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 203), կարող էր գլխավորած լինել Մուշեղը (կամ, որ ավելի քիչ հավանական է, նրա որդի Թոռնիկը)։

27 Մատթեոս Ուռհայեցի, էջ 130։

28 «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», բնագիրն առաջաբանով և ծանոթագրություններով առաջին անգամ ի լույս ընծայեց Կ. Կոստանյանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 312—315։ Ն. Ակինյան, Թոռնիկյանց ճյուղագրությունը, «Մատենագիտական հետազոտություններ», հատ. Դ, Վիեննա, 1938, էջ 49։

29 Մատթեոս Ուռհայեցի, էջ 207։ Ինչպես ցույց է տվել Մ. Օրմանյանը, Թոռնիկը ոչ թե Վահրամի՝ Գրիգոր Բ Վկայասերի աղջկա ամուսինն էր, այլ նրա «գերդաստանին փեսա ըլլալուն վրա կիմացվի, քանի որ Թոռնիկ ավելի ճիշդ առմամբ՝ Վահրամի քեռայր կկոչվի (Մագ. 316)» (Մ. Օրմանյան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, § 877)։ Ղ. Ալիշանը նշում է. «Ստուգության կարոտ և արժանի է այս խնամությունս» («Շնորհալի և պարագա յուրո», Վենետիկ, 1873, էջ 40, ծան. 1)։ Կ. Կոստանյանցը Թոռնիկին համարում է Դ. Մագիստրոսի փեսաներից մեկը (նշվ. աշխ., էջ 316)։

30 J. Markwart. Sudarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 528։ Ն. Ադոնցը ենթադրում է, որ Հովհաննես-Թոռնիկի մայրը (ուրեմն «առաջին» Զորդվանելի կինը՝ Մարիամը) Տարոնում ըստ նրա շուրջ 935 թ. հիշատակվող «իրն-Թոռնիկի» դուստրն էր։ Իսկ Ադոնցի կարծիքով Տարոնի և Բյուզանդիայի Թոռնիկյանները Բագրատունիներից էին սերում։ Մուշեղի ընտանիքում Թոռնիկ և Զորդվանել անունների հայտնվելը Ն. Ադոնցը բացատրում է Մուշեղի ամուսնությամբ «առաջին» Զորդվանելի թոռան՝ Զորդվանել Մագիստրոսի դստեր կամ թոռան հետ (N. Adontz. Les Taronites en Armenie et Byzance, EAB, էջ 234—235)։

թվում Զորդվանել մագիստրոսին նույնացնել «այն Զորտուանելի հետ, որ 970/2-ին նիզակակից եղած է Վասակ Պահլավունուց»[31]։ Ուռհայեցին, որի տված տեղեկության վրա է հիմնում իր այդ կարծիքը Ն. Ակինյանը, Զորդվանելի և Վասակի մասին խոսում է այն իրադարձությունների շարքում, որոնք նա դնում է 970—972 թթ. միջև[32]։ Սակայն, ինչպես ժամանակին ցույց է տվել Ղ. Ալիշանը, Վասակի հետ կապված անցքի թվականը ճիշտ է նշված Վարդանի մոտ[33]. «Ի չորեքհարիւր եօթանասուն (1021) թուին եկ Տուղրիլ-Բեկն և պատահեաց նմա ի Նախճաւանի Լիպարիտն հինգ հազար հեծելօք, և փախեաւ յանդիման բազմութենէն, և ի գալ թուրքին ի Դուին և սփռել ասպատակս, եկ ընդդէմ նոցա քաջն Վասակ[34], և ցուցեալ մեծ քաջութիւն դառնայ ի Սերկևիլ, և ի հանգչելն անդ սակաւ մի քնով՝ քարիւ հարեալ զգլուխն այր մի յանգէտս, մեռանի»[35]։ Վարդանը, ճիշտ է, այստեղ չի խոսում Ուռհայեցու հիշատակած Զորդվանելի մասին, սակայն Վասակ Պահլավունու և Լիպարիտ զորավարի մասին եղած հիշատակությունն ինքնըստինքյան պերճախոս է։

Ս. Տ. Երեմյանը նշում է, որ Վասակ Պահլավունու հետ 1021 թ. հիշատակվող Զորդվանելը նույն ինքը Լիպարիտի քեռորդի Զորդվանելն էր[36], որին հիշատակում է Մատթեոս Ուռհայեցին, այս անգամ արդեն 1048 թ. թուրքերի դեմ կռվողների թվում և որը գիշերային մի ճակատամարտում սպանվում է[37]. Իսկ Վարդանը, նորից չհիշատակելով Զորդվանելի անունը, համառոտ նկարագրում է այդ ասպատակությունը. «Գրիգոր որդի քաջին Վասակայ... առնու ընդ իւր զԱպիրատն զիշխանն Վրաց, և այլ ևս երկու Մաժիստրոսս, և երթայ ընդդէմ

---

31 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 67։ Հմմտ. Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի, Երևան, 1973, էջ 299, ծան. 34։

32 Մատթեոս Ուռհայեցի, էջ 7, 14։

33 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 391, ծան. 7։ Հմմտ. «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ ԻԷ և Լեռ, Հայոց պատմություն, հատ. II, Երևան, 1947, էջ 666։ Ի դեպ, մեկ այլ տեղ Ն. Ակինյանը նշում է Ղ. Ալիշանի և Մարկվարտի կարծիքը, թե Վասակ Պահլավունուն Զորդվանելը նիզակակից եղավ 1021 թ. (նշվ. աշխ., էջ 82)։

34 Ղ. Ալիշանը բազմիցս ճիշտ նշում է, որ Վասակը Վահրամի եղբայրն էր և Գրիգոր Մագիստրոսի հայրը («Այրարատ», էջ 271, 332, 349, 391։ «Ծնորհալի և պարագա յուր», Վենետիկ, 1873, էջ 24։ «Շիրակ», Վենետիկ, 1881, էջ 146), ուստի երկու տեղ եղած այն նշումը, որ Վասակը Գրիգոր Մագիստրոսի հորեղբայրն էր, իսկ Վահրամը՝ հայրը («Այրարատ», էջ 313, ծան. 3, էջ 315, ծան. 1) պետք է վրիպակ լինի։

35 «Վարդանայ վարդապետի Հաւաքումն պատմութեան», Վենետիկ, 1862, էջ 98։ Ինչպես գտնում է Հ. Մանանդյանը, որի հետ համաձայն է Ս. Երեմյանը, այս տեղեկությունը վերաբերում է դելմիկների ներխուժմանը, որոնց բանակում կային նաև թուրք-սելջուկների զորքեր (Հ. Մանանդյան, Հայաստանի պատմությունը Թաթարական արշավանքների շրջանում, Երևան, 1922 (ձեռագրի իրավունքով), էջ 28, Ս. Տ. Երեմյան, Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, Ն. Մառի անվան կաբինետի «Աշխատություններ», № 2, Երևան, 1947, էջ 122—123)։

36 Ս. Տ. Երեմյան, նույն տեղում։

37 Մատթեոս Ուռհայեցի, էջ 107—108։ Ղ. Ալիշանը նշում է, որ գուցե «Գորգ Զորտվանել ազատ, այսինքն ազնվական, նիզակակից Վասակա Պահլավունւոյ որ Գր. Մագիստրոսի, համին 1021, ըլլա Վիզենի պապն պապն, զի տարիքն հարմար է. և ըստ այսմ կըլլա դա հայր Մուշեղի» (Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 391, ծան. 7)։ Նշենք, որ Զորդվանելը ոչ թե Սասունից պետք է լիներ, այլ Տայքից։ Սասունում XI դարի առաջին կեսին Սասունի Մամիկոնյաններ-Թոռնիկյաններից իշխում էին Մուշեղը, այնուհետև Թոռնիկը, որի որդին՝ Զորդվանելը, հանդես եկավ միայն XI դարի երրորդ քառորդում։

Բրեհիմայ զօրագլխի Տուղրիլ-Բէգ սուլտանին. ուր ըմբըռնեցաւ Լիպարիտն և ածաւ առ սուլտանն»[38]։ Այնուհետև երկու պատմիչներն էլ հաղորդում են Լիպարիտի ազատվելու և վերադարձի մասին[39]։

Ինչպես տեսնում ենք, Հովհաննես-Թոռնիկի եղբորորդի Զորդվանել մագիստրոսին իրոք չպետք է նույնացնել[40] Վասակ Պահլավունուն 1021 թ. դինակցած Զորդվանելի հետ, որը կարող էր նույն ինքը Լիպարիտ զորավարի քրոջ որդին լինել (սպանվեց 1048 թ.)[41]։

Ն. Ակինյանը (հավանաբար, Յ. Մարկվարտի վերոբերյալ ենթադրությանը հետևելով) Մուշեղի մասին մի տեղ նշում է. «Կերևա թե հորը (ըստ գիտնականի՝ Զորդվանել մագիստրոսի— Է. Դ.) սպանութենեն ետքը ի Սասուն ապաստարան գտավ և տիրացավ երկրին»[42]։ Իսկ մի այլ տեղ, հիմնվելով Ասողիկի հաղորդման վրա («Տարօնոյ[43]... Հոռոմք տիրեցին»)[44], գրում է. «Ինձի կ՝ երևվա իշխանությունն գլուխ կարգվեցավ Ապուղամրի (պետք է լինի Ապոգանեմի— Է. Դ.) թոռը, Թոռնիկի որդին, որ ըլլա թերևս Մուշեղ (կամ անոր հանվանի անծանոթ հայրը)»[45]։ Ըստ նրա Մուշեղը մի դեպքում Տայքի-Դերջանի Մամիկոնյաններ-Թոռնիկյանների ճյուղին էր պատկանում[46], իսկ մյուս դեպքում՝ Տարոն-Սասունի։

---

38 Վարդան, էջ 99։ Ինչպես ճիշտ նշում է Կ. Կոստանյանցը, հիմնվելով Լաստիվերտցու (էջ 80) և Ուռհայեցու (էջ 107) հաղորդումների վրա, Լիպարիտը օգնության էր եկել բյուզանդական բանակին, որի հրամանատարներ Մոնոմախոս կայսրը (1042—1055) կարգել էր Կատակալոնին, Ահարոն Բուլղարին և Գրիգոր Մագիստրոսին (նշվ. աշխ., էջ ԽԴ)։

39 Մատթեոս Ուռհայեցի, էջ 108։ Վարդան, էջ 99։

40 Ուրեմն նաև չի ապացուցվում Ն. Ակինյանի հաջորդ թեզը, թե «Զորտվանելի այս նիզակակցությունը Վասակ Պահլավունվո հետ կը թելադրե խորհիլ, թե արդյոք այս շրջանեն չէ՞ ընձյուղած Պահլավունյաց և Թոռնիկյանց միջև այն խնամիական կապը, որուն մասին կակնարկե 1072-ին Փիլարտոս ուղղելով իր խոսքը Գրիգոր Վկայասեր կաթողիկոսին. «թէ քո փեսայ է Թոռնիկն. գնա եւ կոչեա զնա ինձ ի հնազանդութիւն» «Ուռհ. 207» (Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 67—68)։

41 Նշենք, որ Ն. Ակինյանը լավ ծանոթ է Ուռհայեցու հաղորդմանը Լիպարիտի քեռորդի Զորդվանելի մասին, վերջինիս անվանելով «Զորդվանել Ե» (նշվ. աշխ., էջ 73)։

42 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 68։ Գիտնականը նման եզրակացության կարող էր գալ, նկատի ունենալով այն, որ, ինչպես Ասողիկի մի հաղորդումից (էջ 251) ինքն է եզրակացնում. «Զորտվանելի իշխանությունը կը տարածուեր Տարոնեն մինչեւ Դերջան» (Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 61, համմտ N. Adontz, EAB, էջ 146)։ Անհրաժեշտ է նշել, որ ինչպես ցույց է տվել հենց ինքը Ն. Ակինյանը (նույն տեղում, էջ 49—76), Զորդվանել մագիստրոսը Տայքի Մամիկոնյաններ-Թոռնիկյանների ճյուղին էր պատկանում։ Իսկ մինչ ապստամբությունը Տարոնում նա կարող էր հանդես գալ միայն որպես բյուզանդական պաշտոնյա, որի իշխանության հիմնական նեցուկը հանդիսանում էր Դերջանը, որը, ըստ երևույթին, նրա հայրենական կալվածքն էր։

43 Ն. Ակինյանը փակագծում ավելացնում է. «Անշուշտ, միաժամանակ Սասնոյ» (էջ 82)։ Ռ. Գրուսեն Մուշեղին ուղղակի նշում է Տարոնի և Սասունի տեր, Բյուզանդիայի սյուղերենության տակ (R. Grousset, նշվ. աշխ., էջ 491)։ Սակայն, ինչպես ցույց են տալիս փաստերը, Սասունը ընդհանրապես չէր անցել կայսրությանը։ Այս տեսակետից իրավացի է Ա. Կաժդանը նշելով, որ Մատթեոս Ուռհայեցու շարադրանքը բավականին հիմք չի տալիս Մուշեղի որդի Թոռնիկին համարելու բյուզանդական կուսակալ, ինչպես կարծում է Ն. Սկաբալանովիչը (Н. А. Скабаланович, Византийское государство и церковь в XI веке, СПб, 1884, էջ 198 և հտ. տե՛ս А. П. Каждан, Армяне в составе господствующего класса Византийской империи в XI—XII вв., Ереван, 1975. էջ 53)։

44 Ասողիկ, էջ 183։

45 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 82։

46 Համմտ. «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 3, Երևան, 1976, էջ 484։

Իրավացի է Ն. Ակինյանը Ապոգանեմի և նրա որդի Թոռնիկի ճյուղը Մամիկոնյան համարելով, սակայն նա Մամիկոնյան է համարում նաև Միրանաժինի կողմից X դարի առաջին կեսին Տարոնում հիշատակվող Գրիգորիկ իշխանի ճյուղը[47]։ Իսկ Յ. Մարկվարտը, Ն. Ադոնցը և այս հարցում նրանց հետևողները, տարբեր ձևով, սրանց բոլորին Բագրատունի են համարում[48]։ Ինչպես ընդունել և նշել ենք, Կոստանդին Միրանաժինի կողմից Տարոնում հիշատակված անձանցից[49] իրոք Բագրատունի էր միայն Գրիգորիկ Տարոնացու և նրա որդիների՝ Բագարատի և Աշոտի ճյուղը, իսկ Մամիկոնյան-Թոռնիկյանների ճյուղին էր պատկանում Ապոգանեմի, նրա որդի Թոռնիկի և նրանց ժառանգների ընտանիքը։ Այսինքն, X դարի առաջին կեսին, մինչև Բագրատունիների հեռանալը (960-ական թթ.), Տարոն—Սասունի տարբեր մասերում իշխում էին Տարոնի Բագրատունիները, որոնք այդտեղ հաստատվել էին IX դարի առաջին տասնամյակին, և Տարոն—Սասունի Մամիկոնյաններ-Թոռնիկյանները, որոնք իրենց հայրենական կալվածքներում սկսել էին ակտիվանալ IX դարի երկրորդ կեսից[50]։

Վերադառնալով Ն. Ակինյանի վերոհիշյալ դիտողություններին, կարելի է ասել, որ նա ավելի հակված է իր երկրորդ կարծիքին։ Այդ երևում է նաև այն բանից, որ նա, խոսելով Մուշեղի որդի Թոռնիկի մասին, այնուհետև նշում է. «Սասնո Թոռնիկյան ճյուղը առանց տարակուսի ընձյուղած է Տարոնի Թոռնիկյան բունենն»[51]։

Ն. Ադոնցի կարծիքով, Մամիկոնյաններն իրենց հին կալվածքներում նորից երևացին Տարոնի Բագրատունիների վերացումից հետո[52]։ Նա գտնում է, որ Մամիկոնյանների մի ճյուղը, որից սերում էր Մուշեղի ընտանիքը, Տարոնի Բագրատունիների հզորանալու ժամանակ պահպանվել էր Արածանիի ստորին հոսանքի շրջանում և որ այդ ճյուղի ներկայացուցիչներն էին Միրանաժինի հիշատակած Մանվելը և նրա որդիները, ինչպես նաև Վասակն ու նրա եղբայրները, որոնք հեռացան Բյուզանդիա դեռևս Լևոն VI (886—912) կայսեր օրոք[53]։

---

47 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 76—80։

48 J. Markwart. նշվ. աշխ., էջ 495։ N. Adontz. EAB. էջ 252։ «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 3, էջ 83—86 և այլն։ Ա. Ալպոյաճյանը այս հարցերի կապակցությամբ, առանց քննելու, մեկ հենվում է Ն. Ակինյանի, մեկ Ն. Ադոնցի տեսակետների վրա, որոնք, ինչպես տեսնում ենք, իրարամերժ են։ Ա. Ալպոյաճյանը գալիս է հետևյալ եզրակացության. «Ուրեմն պետք է ընդունել թե այս Թոռնիկը՝ Ապուղամրի թոռան զավակն է կամ բոլորովին տարբեր անձ մը հին տանուտեր Մամիկոնյաններեն սերած և կամ ընդունել թե Ապուղամրի ընտանիքը խնամիացած է Մամիկոնյան ընտանիքին հետ և իրենց զավակները նկատված են որքան Բագրատունի, նույնքան Մամիկոնյանս (նշվ. աշխ., էջ 155)։ Ինչպես տեսնում ենք, Ա. Ալպոյաճյանն այս ճյուղերի մասին որոշակի կարծիքի չի հանգում։

49 Constantine Porphyrogenitus. De Administrando Imperio, Greek text ed. by Gy. Moravcsik, English transl. by R. J. H. Jenkins. Budapest. 1949. գլ. 43 (այսուհետև՝ D. A. I.)։

50 Տե՛ս մեր վերոհիշյալ հոդվածները՝ «Լրաբեր», 1977, № 10, էջ 65 և «Պատմա-բանասիրական հանդես», 1978, № 1, էջ 125—140։

51 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 49։

52 Գիտնականի այս տեսակետը հիմնված է այն բանի վրա, որ նա, ինչպես նշվեց, թե Գրիգորիկի և թե Ապոգանեմի ու նրա որդի Թոռնիկի ճյուղերը Բագրատունի է համարում։

53 N. Adontz. EAB. էջ 235։ Ըստ Միրանաժինի, Մանվելը Դեգիքի իշխանն էր (տե՛ս P. Charanis. նշվ. աշխ., էջ 29, 48), իսկ Վասակը իր երկու եղբայրների հետ փախստական էր Մելիտենեում (D. A. I. 50. 115—120. 139—144)։

Ադոնցը նույն տեղում նշում է, թե քանի որ Մուշեղի որդի Թոռնիկը նաև Աշմուշատ բերդի տերն էր համարվում, ուրեմն կարելի է կարծել, որ Մուշեղի ընտանիքը ծագում էր Մամիկոնյանների հիշված ճյուղից, որն այնուհետև բաշվել ու պահպանվել էր Սասունի լեռներում[54]։

Իրավացի է Հ. Մանանդյանը, երբ խոսելով XI դարի երկրորդ կեսին տեղի ունեցած դեպքերի մասին, հատկապես նշում է. «Հայաստանի հարավում հայկական անկախ երկիր էր Սասունի իշխանությունը, որի մեջ էին գտնվում այս ժամանակ Հանձիթ գավառի որոշ մասերը, Աշմուշատ կամ Արշամաշատ քաղաք-բերդը և Տարոն գավառի մի մասը»[55]։ Իսկ Մ. Հովհաննեսյանը ավելի կոնկրետ գրում է, որ Աշմուշատը Սասունի իշխանական տանն անցավ Թոռնիկի ժամանակ, երբ Բյուզանդական կայսրությունը դժվարին օրեր էր ապրում[56]։ Ինչպես տեսնում ենք միայն XI—XII դդ. կապակցությամբ կարելի է առայժմ ստույգ ասել, որ Աշմուշատը Սասունի իշխանական տան ձեռքում է եղել[57]։ Իսկ մինչ այդ այնտեղ կարող էին Տարոն—Սասունի Մամիկոնյանների շառավիղներից լինել, սակայն հիմք չկա ենթադրելու, թե Մամիկոնյաններն այս դարերի ընթացքում Սասունից լրիվ հեռացել էին և նորից վերադարձել։ Սասունը այն բնականորեն պաշտպանված լեռնային կղզին էր, որը պատըսպարեց Մամիկոնյանների տան անդամներին ամենից ծանր պահերին։

Եթե Ծիրանածինի հիշատակած անձինք, որոնց մասին խոսում է նաև Ադոնցը, Մամիկոնյաններ էին, ապա նրանց և Մուշեղի ընտանիքների միջև եղած կապը պետք է լիներ այն, որ գուցե բոլորն էլ Տարոն—Սասունի Մամիկոնյաններից էին սերում, սակայն առաջինները կամ նրանց նախնիները այդտեղից հեռացել էին շատ ավելի վաղ։

Անհրաժեշտ է նշել, որ Չորրորդ Հայքում, որի կազմի մեջ էր մտնում Արածանիի ստորին հոսանքի շրջանը, Զաքարիա կաթողիկոսի ժամանակ (855—876) «տարոնացիներ» են հիշատակվում[58]։ Ն. Ադոնցը կարծում է, որ Անի—Շիրակի Բագրատունիներից տարբերելու համար Տարոնի Բագրատունիներին անվանում էին «Տարոնիտ»—տարոնացի[59]։ Ինչպես տեսնում ենք, այս

---

54 Հմմտ. Ա. Այպոյան, նշվ. աշխ., էջ 152։

55 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. 9. Երևան, 1952, էջ 76։ Ըստ երևույթին, Հ. Մանանդյանը նկատի ունի, որ Տարոնի մյուս մասը, մինչև Մանազկերտի ճակատամարտը, Բյուզանդիայի տիրապետության տակ էր, որտեղ և, ինչպես կարծում ենք, պետք է իշխեր (սկզբնական շրջանում տարածքի ավելի լայն, իսկ հետագայում պակաս ընդգրկումով) Դանձիից սերող ճյուղը, որի մասին ստորև կխոսենք։ Նույն էջում գիտնականի արած նշումը, որ Թոռնիկը մահացավ 1078 թ., քիչ հավանական է թվում։ Ուռհայեցին Թոռնիկի եղերական մահը դնում է այն դեպքերի շարքում, որոնք նկարագրում է ՇԻԱ և ՇԻԴ թթ. միջև (Մատթեոս Ուռհայեցի, էջ 205—211), ուրեմն այդ պետք է տեղի ունեցած լիներ մոտ 1072/3 թ.։ Կ. Կոստանյանցը նշում է 1073 թ. (նշվ. աշխ., էջ 313)։ Նշված է նաև 1075 թ. («Հայ ժողովրդի պատմություն», հատ. 3, էջ 485)։

56 Մ. Հովհաննեսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 82։ Նույն էջի ներքևում փաստական վրիպումներ են նկատվում՝ 87-րդ էջում հեղինակը Թոռնիկին հիշատակում է որպես Մուշեղի որդի, սակայն այստեղ նրան Մուշեղի թոռ է համարում, իսկ Մուշեղի հայր է համարում Վիգեն I-ին։

57 Ծիրանածինը հիշատակում է Ասմոսատոն բանակաթեմը (D. A. I., 50)։ Հ. Էփրիկյանը Թեոփիլոս կայսեր (829—842) կողմից Աշմուշատի ավերումից հետո անմիջապես խոսում է այն մասին, որ XI դարում բերդը Թոռնիկի ձեռքում էր (նշվ. աշխ., էջ 225)։

58 I. Darrouzès, Deux lettres inédites de Photius aux Armeniens, „Revue des Etudes Byzantines", t. XXIX, 1971, էջ 139, 147։

59 N. Adontz, Observations sur la genealogie des Taronites, EAB, էջ 345։



Տարոնի և Սասունի Մամիկոնյան-Թոռնիկյանները XI-XII դ.դ

* Պահլավունիների գերդաստանի փեսա

ենթադրությունը պետք է վերաբերի այն ժամանակաշրջանին, երբ Շիրակում Բագրատունիները հռչակվել էին թագավոր, այսինքն 886 թ. հետո։ Ն. Ադոնցը Տարոնի իշխան Աշոտի (մահ. 966/7 թ.) որդիներին՝ Գրիգորին և Բագրատին I համարում Բյուզանդիայի «Տարոնիտների» ճյուղի հիմնադիր[60]։ Իր այդ տեսակետը հիմնավորելու համար Ն. Ադոնցը, քննադատելով Պ. Լորանին, Գրիգորիկի և Դավիթ Արքայիկի որդի Աշոտի կապակցությամբ նշում է, որ «՝չ մեկը, ո՝չ էլ մյուսը չէին հանդիսանում բյուզանդական «Տարոնիտների» ճյուղի նախնի[61]։ Սակայն եթե մեծանուն գիտնականը առաջինի մասին իրավացի է, ապա Ծիրանածինի մի հաղորդումից երևում է, որ երկրորդը՝ Դավիթի որդի Աշոտը (ամենայն հավանականությամբ ընտանիքով) և նրա եղբայրը գնացել էին կայսեր մոտ Կոստանդնուպոլիս (IX—X դդ. սահմանագլխին) և այլևս Տարոն չէին վերադարձել[62]։ Անկախ նրանից, թե սրանք էին «Տարոնիտների» ճյուղի հիմնադիրը Բյուզանդիայում, թե կևս դար անց Աշոտի որդիները, այսինքն Գրիգորիկ Տարոնացու թոռները՝ Գրիգորը և Բագրատը, պետք է ենթադրել, որ Փոտ պատրիարքի (858—867 և 878—886) Զաքարիային գրած նամակներից մեկում հիշատակված «տարոնացիները» Չորրորդ Հայք էին եկել Տարոնից և, եթե պատկանում էին այդտեղի իշխանական տներից մեկին, ապա կարող էին ոչ թե Բագրատունի, այլ Մամիկոնյան լինել, սակայն դա չի նշանակում, թե Մամիկոնյանները լրիվ հեռացել էին Տարոն—Սասունից։ Հետևելով Ն. Ակինյանի վերը նշված թեզին, կարելի է ասել, որ Մուշեղի ընտանիքը սերում էր Տարոն—Սասունի Մամիկոնյաններ-Թոռնիկյաններից[63]։ Ինքը, Մուշեղը, պետք է նաև ժամանակակից լիներ Գանձիի որդի Տաճատին։

Կարծում ենք, որ վերջինիս մասին է խոսվում Մշո Առաքելոց (Ղազարու) վանքի «Ճառընտիրում» («Այս մեր բարձր հրամանաց է գիր եւ մեծի տէրութեան իշխանի Տարաւնայ եւ ամենայն հայոց Չորտուանէլի՝ որդւոյ Տաճատայ քաջի Մամիկոնոյ, քանզի ես Չորտուանէլ բաղում աւուրց լեալ՝ տիրեալ հայրենի աշխարհիս մերում Տարաւնոյ եւ այլ բազում աշխարհաց, զաւրավիգն ունելով զՔրիստոս եւ զսուրբ խաչն կենարար, եւ հրամանաւ ինքնակալացն Յունաց ոչ զանգիտեցի ի սպառնալեաց եւ յարշաւանաց ազգի Իսմայելացւոց, որք յայսմ ժամանակի մարտեալ կռվին ընդ սուրբ եկեղեցիսն Աստուծոյ եւ ծարաւին հեղման արեան որդւոց սուրբ աւազանին. եւ մեր ապաւինեալ [ի] վերին աւգնակութիւն, կացեալ արիաբար ընդդէմ բազմահնար եւ չարաչար մարտի

60 Նույն տեղում, էջ 243։ Հետևելով Ն. Ադոնցին, Պ. Խառանիսը նույնպես Թոռնիկյաններին Բյուզանդիայի Տարոնիտների ընտանիքի մի ճյուղն է համարում (P. Charanis, նշվ. աշխ., էջ 46)։ Այնինչ Բյուզանդիայի Տարոնիտների ընտանիքը, իրոք, ինչպես կարծում է Ն. Ադոնցը, Տարոնի (սակայն մի մասի—Է. Դ.) Բագրատունիներից էր սերում, իսկ Թոռնիկյաններինը (որոնց, ինչպես նշվեց, Ն. Ակինյանը իրավացիորեն Մամիկոնյան է համարում) հիմնականում պետք է սերեր Տայքի—Դերջանի Մամիկոնյաններ-Թոռնիկյաններից։

61 N. Adontz, EAB, էջ 343։

62 D. A. I., 43. 56—57։ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1978, № 1, էջ 127—128։

63 Նշելով, որ Մուշեղի ընտանիքը Տարոն—Սասունի Մամիկոնյաններ-Թոռնիկյաններից էր սերում, պետք է նկատի ունենալ, որ իրոք այն կարող էր խնամական կապերի մեջ լինել շրջապատի իշխանական տների հետ, որոնցից հիշատակվում են Պահլավունիների, Մոկքի իշխանական տան, Դեգիքի Կեկավմենոսների հետ եղած կապերը։ Դրանց թվին, որոշ վերապահությամբ ընդունելով Ն. Ադոնցի վերոհիշյալ ենթադրությունը, կարելի է դասել նաև Տայքի—Դերջանի Մամիկոնյաններ-Թոռնիկյանների իշխանական տունը։

նոցա զամենայն աւուրս կենաց իմոց՝ մինչեւ յետին աւր ծերութեանս իմ, ոչ եղեւ խաղաղութիւն իմ ընդ նոսա։ Եւ զամենայն աշխարհ, որ ընդ մեր ձեռամբ էր՝ ի խաղաղութիւն պահեալ։ Ապա զմտաւ ուծի զաւր մահուան իմոյ եւ զյետին ելս իմ յաշխարհէս, գնացի ի սուրբ ուխտ Առաքելոցն՝ Ղաղարու վանայ... Ես Զորտուանէլ զուարթ դիմօք եւ յաւժարական կամաւք և սրտի մտաւք աւանդեցի եւ եռու զսա[...] դասա[տ]ակերտս զհայրենի... եւ բաղում [...] ջաղացովն եւ բուրաստանաւք եւ այգեստանաւք... Մնացական հայրենիս՝ Սուրբ Առաքելոցն Ղաղարու վանիցն ի յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց՝ Տաճատա Մամիկոնոյ եւ մաւրն իմ Զարմանդիտոյ եւ նախնեաց իմոց քաջարանցն Վեռենայ եւ Մեհերա[64], որք յառաջ քան զմեզ տիրէին այսմ աշխարհիս...»)[65]։ Նույն անձի մասին է խոսվում նաև հունարենից հայերեն թարգմանված «Սահմանագրում» («Ես Զորտուանէլ Մամիկոնեան որդի Տաճատա Մեծի, իշխան Տարաւնոյ և ամենայն աշխարհիս Հայոց տեսի զայս գիր սահմանաց»)[66]։

«Ճառընտիրում» հիշատակվող Տաճատին Ն. Ադոնցը իրավացիորեն նույնացնում է XII դարի սկզբներին Ուռհայի հետ կապված անցքերի առնչությամբ Ուռհայեցու կողմից հիշատակվող Ապլասաթի հոր՝ «իշխան Տարօնոյ»[67] Տաճատի հետ, միևնույն ժամանակ եզրակացնելով, որ նրա մյուս որդու անունը Զորդվանել էր։ Սակայն նշում է նաև, որ այս Տաճատը նույն ինքը Մուշեղի որդի Թոռնիկն է, ենթադրելով, որ վերջինիս անունը իր պապի անունով Տաճատ էր, և քանի որ Թոռնիկի որդիներն էին Զորդվանելը և Վասակը, գիտնականը ի ապացույց իր ենթադրության ևս մեկ ենթադրություն է անում, թե «Աբուլասաթ»-ը Վասակ անվան տրաբական ձևն է։ Այսուհանդերձ Ադոնցը նշում է, որ Ուռհայեցին Թոռնիկին և Տաճատին տարբերում է, իսկ դա իր ենթադրության օգտին չի խոսում։ Եվ այնուհետև գրում է, թե ճիշտ է մի բան՝ որ Տաճատի որդի Զորդվանելը պատկանում էր նույն ընտանիքին, ինչ և Թոռնիկը և ներկայացում էր մի այլ ճյուղ, որը իշխում էր Տարոնի արևելյան մասում[68]։

---

64 Մեհերան պետք է համապատասխանի Մեհեր անվանը (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, Երևան, 1946, էջ 415), իսկ Վեսենան, ինչպես նշում է Ղ. Ալիշանը, Vincentus>Vincent-ին, որից, նրա կարծիքով, հայերենում առաջ է եկել Վիգեն անունը («Հայապատում», էջ 391, հմմտ. N. Adontz, EAB, էջ 239)։ Ինչպես հայտնի է, Վիգեն անունը հանդես է գալիս Տարոն—Սասունի Մամիկոնյաններ-Թոռնիկյանների մոտ, իսկ «Սասունցի Դավիթ» էպոսում դրա բարբառային ձևն է՝ «Վերգո»։ Անունների հիշատակությունը այս ձևով խոսում է, թերևս, այն մասին, որ Զորդվանելի նախնիները ապրելիս են եղել օտար միջավայրում, որպիսին կարող էին լինել Բյուզանդիայի արևմտյան շրջանները ժամանակի ընթացքում այնտեղ հեռացած Մամիկոնյաններից ոմանց համար։ Սակայն նրանք պետք է հուշեր պահպանած լինեին իրենց հայրենի կալվածքների մասին և սերնդե-սերունդ այդտեղ վերադառնալու։ Հույսեր փայփայեին։ Եվ արդեն X—XI դդ. սահմանագլխին նրանց սերունդներից սկսում են Տարոնում վերահաստատվել, իսկ Զորդվանելի հիշատակությունը (ինչ-որ չափով վիպական ձևով), թե իր Մեհերա և Վեսենա նախնիներն են այդ հողին տիրել, պետք է վավերացումը լինի այն բանի, որ նա, առանց ընդմիջման, Տարոնը իր պապենական կալվածքն է համարում։

65 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 396—397։ Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, հատ. Բ, Վենետիկ, 1924, էջ 473—476։ Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 289—290։

66 Ն. Սարգսյան, Տեղագրութիւնք ի Փոքր և Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 235։ Հ. Ոսկյան, Տարոն—Տուրուբերանի վանքերը, Վիեննա, 1953, էջ 41։

67 Մատթեոս Ուռհայեցի, էջ 310։

68 N. Adontz, EAB, էջ 239—241։

Կարծում ենք, որ Գանձիի[69] որդի Տաճատը նույն ինքը նշված Տաճատ Մամիկոնյանն էր[70]։ Եթե մեր այս ենթադրությունը ճիշտ է, ուրեմն իրոք Տաճատը և Մուշեղի որդի Թոռնիկը տարբեր անձինք էին և պատկանում էին Մամիկոնյաններ-Թոռնիկյանների տարբեր ճյուղերին։ Այս նույն սրամտությամբ կարելի է ասել, որ Գանձիի որդի Տաճատի կինը Զարմանդուխտն էր, իսկ նրանց որդիներն էին բյուզանդական ծառայության մեջ գտնվող Ապլասաթը (սպանվեց 1112 թ.) և Զորդվանելը։ Վերջինս XII դարի առաջին տասնամյակում դեռևս կենդանի էր [«Ի թուին ՇՆԳ (553—1104) Ճորտուանել Մամիկոնեան որդի Տաճատայ Մամիկոնենի, իշխան գաւառին Տարօնոյ»][71]։ Ղ. Ալիշանը այս «Ճորտուանելին» (Զորդվանել) Մուշեղի թոռան՝ Զորդվանելի ժամանակակից է նշում[72], ուրեմն իրավացիորեն դրանց տարբեր անձինք է համարում։ Այն, որ Տաճատի որդի Զորդվանելը և Թոռնիկի որդի Զորդվանելը տարբեր անձինք էին և առաջինը իշխում էր Տարոնի, իսկ երկրորդը՝ Սասունի վրա, երևում է նաև Պողոս Տարոնեցու՝ Թեոփիստե Բարգմանչին գրած մի թղթից, որը բերում է Ն. Ակինյանը. «...իշխանն Հայոց Սասանու... Զորտուանէլս, որդւոյ Թոռնկայ»[73]։

Ինչպես երևում է, XI դարի 50-ական թթ. Տաճատին հաջորդում է որդին՝

---

69 Ճիշտ է, նրա մասին «Ճառընտիրում» չի խոսվում, սակայն անուղղակի փաստերի հիման վրա կարելի է ենթադրել, որ այդտեղ հիշատակվող Տաճատի հայրը Գանձին էր. ա) Կարելի է տեսնել, որ Ուռհայեցու կողմից և «Ճառընտիրում» հիշատակվող ժամանակները համընկնում են։ Եթե Զորդվանելը 1104 թ. դեռևս կենդանի էր և բավականին պատկառելի հասակ ուներ, ուրեմն նրա հայրը պետք է ապրած լիներ XI դարի առաջին կեսին, և հենց 30-ական թթ. էլ հիշատակվում է Գանձիի որդի Տաճատը։ բ) Գանձին հիշատակվում է «իշխան Հայոց» տիտղոսով և նրան «ի տան հայրենեաց իւրոց» [Ա. Կաժդանը նշում է «Բագավորությունը» (նշվ. աշխ., էջ 122), սակայն աղբյուրում այդպիսի արտահայտություն չկա] ժառանգեց Տաճատը, որը, ինչպես ենթադրեցինք, նույն Ապլասաթի և Զորդվանելի հայրն էր, որի տիտղոսն էր «իշխան Տարօնոյ», իսկ այդ երկու տիտղոսները համարյա նույնությամբ կրում էր «Սամանագրում» և «Ճառընտիրում» հիշատակվող Զորդվանելը («Իշխան Տարաւնոյ» և «ամենայն աշխարհիս Հայոց»). գ) թե՛ Ուռհայեցու մոտ և թե՛ «Ճառընտիրում» ու «Սամանագրում» Տաճատի որդու անունը Զորդվանել է հիշատակվում։

70 Կ. Յուզբաշյանը նշում է, որ Գանձիի սպանվելուց հետո Բերկրիի կառավարիչ է դառնում նրա որդի Տաճատը (K. Yuzbashian, նշվ. աշխ., էջ 50)։ Սակայն Ուռհայեցու հաղորդման մեջ ասվեց, որ Տաճատը մնաց «ի տան հայրենեաց իւրոց»։ Զգուշանալ հետաքրքիր է Ա. Ալպոյաճյանի նշումը, որ Գանձիի որդի «Տաճատ իշխան Տարօնոյ» 1037 թ. վերջից և 1056 թ. առաջ Տարոնի մեջ կազմված բյուզանդական զինվորական հրամանատարությունում պաշտոն է վարել և քանի որ հետազոտողը նշում է, որ նրա որդին էր Ապլասաթը (Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 243), ուրեմն Ուռհայեցու կողմից հիշատակվող Ապլասաթի հորը՝ Տաճատին նույնացնում է Գանձիի որդի Տաճատի հետ։ Ինչպես տեսնում ենք Ն. Ադոնցը «Ճառընտիրում» հիշատակվող Տաճատին նույնացնում է Ապլասաթի և Զորդվանելի հոր՝ Տաճատի հետ, իսկ Ա. Ալպոյաճյանը Գանձիի որդի Տաճատին նույնացնում է Ապլասաթի հայր Տաճատի հետ։ Սակայն որքանով կարելի է դատել շարադրանքից, Ա. Ալպոյաճյանը ծանոթ չէ «Ճառընտիրի» հաղորդմանը, ինչպես և չի նշում Ուռհայեցու հիշատակած Տաճատի մյուս որդու՝ Զորդվանելի (Ապլասաթի եղբոր) մասին եղած հիշատակությունը և ավարտում է իր խոսքը, ասելով. «Ասոր (Տաճատի—Է. Դ.) պաշտոնավարության վրա գաղափար չունինք, ինչպես նաև իր հավանական յաջորդներուն» (նույն տեղում)։

71 Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 396, ծան. 2։

72 Նույն տեղում, էջ 391, ծան. 7։

73 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 83։ Տե՛ս նաև՝ Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 272։

Զորդվանելը[74], որը, կռվելով թուրք-սելջուկների դեմ, նաև 1071 թ. Մանազկերտի ճակատամարտից հետո շարունակում էր Տարոնում իր ձեռքում պահել որոշ կալվածքներ, որոնց մասին խոսվում է նրա կտակում։

Ա. Կաժդանը Գանձին նշում է հայկական ծագում ունեցող այն առանձին ազնվականների շարքում, որոնք չդարձան հայ-բյուզանդական ընտանիքների հիմնադիրներ և որոնց ժառանգները չամրապնդեցին իրենց հայրերի ձեռք բերած դիրքը[75]։ Այնինչ, եթե մեր վերը նշված ենթադրությունը ճիշտ է, Գանձին, եթե ոչ հայ-բյուզանդական, ապա մոտ մեկ դար գոյատևած ինքնուրույն հայկական իշխանական տան հիմնադիր էր Տարոնում։

XI դարի կեսերից Սասունի իշխանական տունը սկսում է ավելի ուժեղանալ։ Մուշեղի որդի Թոռնիկի հզորության մասին է խոսում այն փաստը, որ նա պարտության է մատնում սելջուկներին, որոնք 1059 թ. արշավել էին «ի գաւառն Տարօնոյ եւ բռնակալեալ առ ստորոտ լերամբն Տօրոսի (Տաւրոսի— Է. Դ.) մերձ ի Սասուն»[76]։ Թոռնիկը իր ուժերի վրա վստահ էր նաև այն ժամանակ, երբ Փիլարտոս Վարաժնունին «...կոչեաց զքաջն Թոռնիկ զտէրն Սասնոյ զալ նմա ի հնազանդութիւն»[77]։ Սակայն Ալելուա դաշտում Թոռնիկը նրան պարտության է մատնում։

Ինչպես տեսնում ենք, Գրիգոր Մագիստրոսի ժամանակ և նրանից հետո, մինչև իր մահը, Թոռնիկը բավական ուժեղ իշխանության գլուխ էր կանգնած. և ինչպես նշում է Մ. Օրմանյանը՝ «ընդարձակութիւն և զօրութիւն ստացուցած էր իւր իշխանութեան դեպ Արևմուտք»[78]։

Ինչպես հայտնի է, Գրիգոր Մագիստրոսի տիտղոսն էր «Վասպուրականի և Տարօնոյ և Մանազկերտի, Արճիշոյ, Բերկրոյ, Միջագետաց տէր և Մօնումա-

---

74 Այդ միջոցին Տարոնում, կարճ ժամանակով (1055/56), որպես բյուզանդական իշխանավոր է հիշատակվում «Իվերիայի և Մեծ Հայքի մագիստրոս և դուքս» Ահարոնի որդի Թեոդորոսը (տե՛ս Արիստակես Լաստիվերտցի, էջ 96։ В. Н. Бенешевич, Три армянские надписи X века, Петербург, 1921, էջ 9)։ Ահարոնի այդ տիտղոսը, ինչպես նշում է Հ. Բարթիկյանը, երևում է նրա կնիքի վրա եղած մակագրությունից, որը առաջինը կարդացել և հրապարակել է Վ. Ս. Շանդրովսկայան. „Κόρτε ȝετ ȣ Ἀαρων μαγιστρο καὶ δουκι Ἰȣηρίας καὶ της Μεγάλης Ἀρμενίας" (В. С. Шандровская. Неизвестные печати Аарона магистра и дуки Иверии и Великой Армении и проедра и дуки (XI в.). «Сообщения Государственного Эрмитажа». XXXVII, Л., 1973, էջ 61, տե՛ս Р. М. Бартикян, О феме Иверия, էջ 75)։ Տարոնը Մուշ կենտրոնով հիշատակվում է XI դարում Հայաստանում եղած եպիսկոպոսությունների շարքում, ոչ. Τȣ Κελτζηνής ȝον τή Κορτζήνν καὶ Ταρων. γ'τȣ Μȣȣς (տե՛ս E. Honigmann, նշվ. աշխ., էջ 200—204)։

75 Ճիշտ է. նա այդ դասակարգումը անում է որոշ վերապահությամբ. նշելով. «Мы не всегда можем быть уверенными, что недостаток источников не затемняет нам последующей истории и, что лица, воспринимаемые нами, как аристократы одного поколения в действительности не имели сыновей и дочерей, однако выйти за пределы данного источниками весьма затруднительно» (А. П. Каждан, նշվ. աշխ., էջ 121)։

76 Մատթեոս Ուռհայեցի, էջ 130։ Պատմիչը նշում է, որ Թոռնիկը ուներ հիսուն հազար հետևակ և վեց հազար ձիավոր (տե՛ս նաև Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, էջ 76)։ Նշված է, որ արաբական աղբյուրները Սասունի իշխանին նույնիսկ կոչում էին «Սասունի թագավոր» [մալիք ալ-Սանասինա. տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 3, էջ 484.]։

77 Նույն տեղում, էջ 206։

78 Մ. Օրմանյան, Ազգապատում, § 891։ Ինչպես նշվեց, Թոռնիկի ձեռքում էր Աշմուշատը (Մատթեոս Ուռհայեցի, էջ 208)։

խին մագիստրոս, վէստ և տուկ»[79]։ Ուրեմն Տարոնում իշխող Գանձիի որդի Տաճատը, ապա Ահարոն Բուլղարի որդի Թեոդորոսը[80] և մի առ ժամանակ Տաճատի որդի Զորդվանելը անմիջականորեն ենթարկվում էին Գրիգոր Մագիստրոսին։ Վերջինիս մահից հետո Զորդվանելը (որի տիրույթը փաստորեն սահմանափակվել էր Տարոնի մի հատվածով), պետք է ավելի քիչ քաղաքական կշիռ ունենար, քան Մուշեղի որդի Թոռնիկը։ Հավանաբար Զորդվանելը Թոռնիկի հետ միասին էր կռվում թուրք-սելջուկների դեմ[81]։ Վերջիններիս ասպատակությունները բավականին թուլացրել էին Հայաստանում բյուզանդական վարչական միավորների դիրքերը։ Նույնիսկ այնպիսի վիճակ էր ստեղծվել, որ 1058 թ. «...կօրքն Հոռոմոց յարձակեցան զհետ թուրքին, և ի հասանելն նոցա՝ ոչ համարձակեցան պատերազմել ընդ նոսա, այլ դարձան խաղաղութեամբ ի Հոռոմս» և միայն Թոռնիկն էր, ինչպես վերը տեսանք, որ հաջորդ տարվա գարնանը թուրքերին ջարդ տվեց[82]։ Սակայն Թոռնիկը XI դարի 70-ական թթ. սկզբներին նենգաբար սպանվում է մի դարանակալ թուրքի կողմից, որին ուղարկել էր Փիլարտոսը[83]։

Թոռնիկից հետո մնացին «իւր երկու որդի՝ Զորտուանելն և Վասակ՝ ի տղայական հասակի»[84]։ Սասունի Թոռնիկյանների մոտ Զորդվանել անունը, ինչպես

---

79 «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 213։ Կ. Յուզբաշյանի կարծիքով այս հատվածի հիման վրա հնարավոր չէ առանց վերապահության պնդել, թե Գրիգորը գլխավորում էր երեք թեմ՝ Միջագետքի, Տարոնի և Վասպուրականի։ Նա գտնում է, որ Գագիկին ուղղված նամակում Գրիգորը թվարկում է տարբեր ժամանակներում կրած իր տիտղոսները, բացի «խիտոնիտից»։ Նշում է նաև, որ Թոռնիկը կախում ուներ Գրիգոր Մագիստրոսից (K. Yuzbashian, նշվ. աշխ., էջ 147—148)։ Ինչ վերաբերում է Գրիգոր Մագիստրոսի գլխավորած թեմերի մասին աղբյուրի հաղորդմանը, ապա ճիշտ է Կ. Կոստանյանցը այն հավաստի համարելով (հմմտ. «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 3, էջ 484), քանի որ դա վերաբերում է այն ժամանակաշրջանին, երբ կայսրությունը կարիք ուներ նման միջոցառման («Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ ԽԴ, Խե)։

80 Թեոդորոսի մասին Լաստիվերտցին գրում է. «Իսկ ի կողմանս Տարօնոյ Թէոդորոս որդի Ահարոնի, զոր Աւանն կոչէին ըստ իւրեանց լեզուին, զգիրն պակաս ունելով, որ նա էր իշխան գաւառին» (էջ 96)։ Հայկազյան բառարանում այս հատվածը ճիշտ է մեկնաբանված [...զոր Աւան (կամ Առանն) կոչէին ըստ իւրեանց լեզուին զգիրն (հ) պակաս ունելով», «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», Վենետիկ, 1837, էջ 584], սակայն այն սխալ են թարգմանել աշխարհաբար և՛ Մ. Տեր-Պետրոսյանցը (Աղեքսանդրապոլ, 1893, էջ 11) և՛ Վ. Դևորգյանը (Երևան, 1971, էջ 66), իբրև թե Թեոդորոսը գավառի իշխան էր առանց գրավոր հաստատման։ Նույն հատվածը հիմնականում ճիշտ են մեկնաբանել ռուսերեն Վ. Բենեշևիչը (նշվ. աշխ., էջ 9, ծան. 2) և Կ. Յուզբաշյանը («Повествование...», էջ 105), թեև վերջինս ռուսերեն տեքստում ավելացնում է «պարսիկներ» (իբրև թե նրանք էին այդպես անվանում) բառը, որը բնագրում չկա (տե՛ս նաև էջ 167)։ Նշենք, որ Անիի Մայր տաճարի արևելյան պատին գտնվող մի արձանագրությունից հայտնի է «Առանն» ձևը (Ալիշան, Շիրակ, էջ 70։ Հ. Օրբելի, Անի քաղաք, տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ 1, Երևան, 1966, էջ 38 և այլն)։ Թեոդորոսը մահացու վերք է ստանում, ինչպես նշում է նույն տեղում Լաստիվերտցին, թուրքերի դեմ կռվելիս։ Կոմսաձագերի հետ ազգակցական կապեր ունենալու պատճառով նա ևս պետք է Մամիկոնյանների շառավիղներից սերեր։

81 Նշանակալից են Դ. Ալիշանի հետևյալ տողերը. «Վասպուրականի և Արծրունյաց դրակից աշխարհին՝ Տուրուբերանո մէջ՝ երկու անվանք գավառք կան, որք ավելի երկար ատեն հայկական իշխանություն և պայազատություն պահեցին» («Շնորհալի և պարագա յուր», էջ 107)։

82 Մատթեոս Ուռհայեցի, էջ 130։

83 Նույն տեղում, էջ 208—209։

84 Նույն տեղում, էջ 210։ Այս, ինչպես նշում է Ուռհայեցին, Գրիգորիս (Վահրամ-Գրիգոր) Բ Վկայասեր կաթողիկոսի (1066—1105) ժամանակ էր։ Նա Գրիգոր Մագիստրոսի որդին

տեսնում ենք, հանդես է գալիս XI դարի երկրորդ կեսին, երբ քաղկեդոնականությունը արդեն քաղաքական երանգը կորցրել էր։ Տարոն—Սասունի համար ստեղծված քաղաքական իրավիճակը XI դարի երկրորդ կեսին և XII դարում կարող էր նպաստել հայ միաբնակ (լուսավորչական, որը գերակշռող էր) և երկաբնակ (քաղկեդոնական) դավանանքներին հետևող Մամիկոնյան-Թոռնիկյանների մերձեցմանը[85], որի հետևանքով մինչև XII դարի 80-ական թթ. ընդարձակվեց և գոյատևեց Տարոն—Սասունի Մամիկոնյաններ-Թոռնիկյանների իշխանությունը։

Թոռնիկի թոռան՝ Վիգենի[86] օրոք այդ իշխանական տան սահմանները արևմուտքում հասնում էին մինչև Դեգիք գավառ։ Նույն ժամանակաշրջանում (XII դարի 30-ական թթ.) Մամիկոնյան-Թոռնիկյանների իշխանական տունը պայքարի մեջ մտավ հզորացած Շահարմենների հետ[87]։

Վիգենի որդիներից Զորդվանելը ամուսնացավ Պահլավունի Վասիլի դստեր՝ Վանենիի[88] հետ, իսկ դուստրը՝ Կատան, Դեգիքի Կեկավմենոսների[90] ընտանիքից Շահինշահի[91] հետ «և սուրբ ամուսնութեամբ ծնեալ մանուկ մի, որոյ անուն է Շահմելեք»[92]։

Զորդվանելը մահացավ 1165 թ. իր հոր՝ Վիգենի և մոր՝ Մելէքսթի[93] կեն-

---

էր (Վարդան, էջ 102, Մ. Օրմանյան, Ազգապատում, § 876—915)։ Ա. Տեր-Ղևոնդյանը նշում է, որ ըստ արաբ պատմիչ Ֆաբրիկիի վկայության, Սասունի իշխանը տիրացավ երեսուն գյուղի՝ շրջակա ընկուզենու անտառով։ Դա հետևանք էր Աղձնիքում Սասունի Բշնամի Մրվանյանների իշխանության քայքայման («Հայ ժողովրդի պատմություն», հատ. 3, էջ 485—486)։

85 Կ. Կոստանյանցը Գրիգոր Մագիստրոսի խոսքերի («Բայց դու, Մամիկոնեան, որ համոզեան հաւանեցար Ղեւոնեան ընդարձակագոյն տօմարի...») վրա հիմնվելով, նշում է, որ Թոռնիկ Մամիկոնյանը քաղկեդոնիկ էր («Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 314, հմմտ. Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 53)։

86 «Որդւոյ Զորդ[ու]անելի» (տե՛ս «Յիշատակարանք ձեռագրաց», էջ 397։ «Հայապատում», էջ 391, 393)։

87 Վարդան, էջ 123—124։ Այն հաղորդումը, թե Սասունի իշխանությունը ասպատակություններ էր ենթարկվել հարևանների կողմից, ըստ երևույթին վերաբերում է կամ Խլաթի Սուրմանյաններին, կամ Աղձնիքի Արտուխյաններին («Հայ ժողովրդի պատմություն», հատ. 3, էջ 486)։

88 «Եղբօր տեառն Գրիգորիսի (Գրիգոր Գ Պահլավունի 1113—1166, տե՛ս Մ. Օրմանյան, նշվ. աշխ., § 927—960) Հայոց կաթողիկոսի» («Յիշատակարանք ձեռագրաց», էջ 430։ «Հայապատում», էջ 394)։

89 Նույն հոդվածին կից տոհմածառի Պահլավունիների ճյուղը վերցրել ենք Ղ. Ալիշանի «Շնորհալի և պարագա յուր» աշխատությունից (էջ 12 և 13 միջև)։ Վանենիի մասին նա ոչ թե այդտեղ է խոսում, այլ 28 տարի անց հրատարակված «Հայապատումում»։

90 Տե՛ս H. Bartikian, La généalogie du magistros Basarat, catepan de l'Orient et des Kékauménos, „Revue des Études Arméniennes", II, Paris, 1965, էջ 271։ Տե՛ս նաև Советы и рассказы Кекавмена, подготовка текста, введение, перевод и комментарии Г. Г. Литаврина, М., 1972, էջ 413։

91 «Որդւոյ Գրիգորի, թոռին Կատակալոսի, որդւոյ Կամենի Մեծի» («Հայապատում», էջ 394։ «Յիշատակարանք ձեռագրաց», էջ 401)։

92 Նույն տեղում։

93 «Եւ է յաղգէ Արծրունի և ի շառաւիղէ Սրբոյն Վարդանայ, դուստր մեծ իշխանին Մոկաց Հմայեկի» («Հայապատում», էջ 393։ «Յիշատակարանք ձեռագրաց», էջ 398)։ Ա. Ալպոյաճյանը ենթադրում է, որ Վիգենը հավակնում էր «ինքզինքն կոչելու «թագավոր» հետևցնելով իր կնոջ տրված «Մելիքսթի» այսինքն թագավորի կին (Մելէք—թագավոր, սիթի—կին) կոչումեն և հիշատակարանին իսկ թագուհի բացատրութենեն, տրված Վիգենի կնոջ» (նշվ. աշխ.,

դանության օրոք, թողնելով երեք որդի՝ Վասիլ, Շահինշահ և Թոռնիկ[94]։ 1175 թ. Վիգենին է հաջորդում թոռը՝ Շահինշահը, որին բեկ-Թեմուրը պարտության մատնեց[95]։ Շահինշահը իր եղբայրների հետ 1188 թ. ստիպված եղավ հեռանալ Կիլիկիա[96]։

Տարոն—Սասունի Մամիկոնյաններ-Թոռնիկյանների շառավիղները պետք է որ հաստատվեին Սասունի դժվարամատչելի շրջաններում, որտեղ ժողովուրդը, պահպանելով իր ազատասեր ոգին, պայքարում էր օտար լծի դեմ։ Այս միջավայրում շարունակում է ձևավորվել «Սասունցի Դավիթ» էպոսը[97], որը պարունակում է վայրագ քոչվոր ղավթիների դեմ հայ ժողովրդի դարեր շարունակ մղած հերոսական պայքարի կատ դրվագներ։

МАМИКОНЯНЫ-ТОРНИКЯНЫ ТАРОНА И САСУНА (XI—XII вв.)

Э. Л. ДАНИЕЛЯН

(Резюме)

С конца X в. в качестве византийского правителя Тарона, по всей вероятности, выступает упоминаемый Маттеосом Урхаеци Гандзи (видимо, отпрыск находившихся в Византии Мамиконянов), от которого берет начало княжеский дом в Тароне, просуществовавший более ста лет. Представителями его были сын Гандзи Тачат и внуки Апласат и Чордванел. Сасунские же Мамиконяны-Торникяны (представителями которых были Мушег, Торник, его сын Чордванел, Виген и др.) сумели сохранить самостоятельность и настолько усилились, что уже во второй половине XI в. противостояли агрессии тюрок-сельджуков.

После поражения Византии при Маназкерте (1071 г.) халкидонитство теряет политическую остроту в бывших подвластных территориях империи, и в княжеских доменах Мамиконянов-Торникянов Тарона—Сасуна выступает лишь в качестве вероисповедания, значительно уступая монофизитству.

В первой четверти XII в. представители Сасунского княжеского дома заняли господствующее положение во всех владениях тарон-сасунских Мамиконянов-Торникянов, которые на западе уже доходили до гавара Дегик, находившегося в области слияния р. Арацани с Ев-

էջ 272)։ Անհրաժեշտ է նշել, որ նմանօրինակ անունները միջնադարյան Հայաստանում տարածված են եղել։

94 «Հայապատում», էջ 394։ «Յիշատակարանք ձեռագրաց», էջ 400։

95 Վարդան, էջ 133։ Շահինշահի օրոք Սասունի մասին մանրամասն տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 3, էջ 486—487։

96 Շահինշահը Լևոն II-ից (1187—1219) ստանում է Սելևկիա ամրոցը («Սմբատայ Սպարապետի Տարեգիրք», Վենետիկ, 1956, էջ 200—201, հմմտ. «Հայապատում», էջ 391 և 393, ծան. 7)։ Այդ անցքերի թվագրումը «ՌԻԷ (=1118)» թ. («Հայ ժողովրդի պատմություն», հատ. 3, էջ 487) պետք է վրիպակ համարել, քանի որ Սմբատը հաղորդում է «ՌԼԷ» (=1188) թ.։

97 Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գ. 1, Երևան, 1944, էջ 427, գ. 2, 1946, էջ 69։ N. Adontz, EAB, էջ 236։

фратом, принадлежавшего княжескому роду Кекавменов, с которыми те породнились. Из-за внешней агрессии некоторые представители княжеского дома Тарона-Сасуна были вынуждены в конце 80-х гг. XII в. переселиться в Киликию.

Отпрыски тарон-сасунских Мамиконянов-Торникянов, должно быть, обосновались в труднодоступных местах Сасуна, свободолюбивое население которого боролось против иноземного владычества. В этой среде продолжает складываться эпос «Давид Сасунский», содержащий яркие эпизоды многовековой героической борьбы армянского народа против полудиких завоевателей-кочевников.